ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/193

ք.Երևան **«07» նոյեմբերի 2022թ.**

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ի. Օսիպյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՐԱԿԱՂՅՈՒՍ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ն.Մովսիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի կարիքների համար Ամանորյա տոնական ձևավորման ծառայությունների մատուցման պարտավորությունը** (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ***9600000 (ինը միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ Դրամ:***

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում :

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է **Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
Երևանի քաղաքապետարան	«ՀՐԱԿԱՂՅՈՒՍ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փ. 1	Ք.Երևան, Ն. Շենգավիթ 11փ. 1 նրբ. տ. 52/3
Կենտրոնական գանձապետարան	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 900022750542	Հ/Հ 1570084065950100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 02303834
Ի. Օսիպյան _____	Ն. Մովսիսյան----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	ընդհանուր գինը	կատարման	
						հասցեն	ժամկետը
1	Շենգավիթ վարչական շրջանի Ամանորյա տոնական ձևավորում	79951110/256	Անհրաժեշտ է 2022 թվականի դեկտեմբերի 5-ից մինչև ամանորյան տոների ավարտը ապահովել ամանորյա տոնական լուսային ձևավորում (լուսաշղթաների, լուսացանցերի, լուսագնդերի և այլ զարդարանքների ձեռքբերում, տեղադրում, մոնտաժում, հոսանքի սնուցման ապահովում, գործարկում, ընթացիկ սպասարկում, ապամոնտաժում, պահեստավորում) ստորև քանակական և որակական ցուցիչներին համապատասխան Շենգավիթ վարչական շրջանի ներքոնշյալ հասցեներում: Մոնտաժման աշխատանքները պետք է ավարտվեն մինչև դեկտեմբերի 1-ը, փորձարկումից հետո պատրաստ լինեն շահագործման դեկտեմբերի 3-ին, շահագործման ժամկետը՝ ամանորյա տոների ավարտը, ձևավորման ամբողջ պարագաների ապամոնտաժումը և մատնանշած հասցեում պատվիրատուի տիրապետմանը հանձնելը և պահեստավորելը մինչև ամանորյա տոների ավարտը (հստակ ժամկետները համաձայնեցնել պատվիրատուի հետ): Լուսաշղթաների, լուսացանցերի, լուսագնդերի և այլ զարդարանքների գույների, չափսերի և արտաքին տեսքի հետ կապված լրացուցիչ մանրամասները համաձայնեցնել պատվիրատուի հետ:	դրամ	9,600,000	Շենգավիթ վ/2	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 25.12.2022թ. ներառյալ

Հասցե		Փողոցների կողմեր	Տեղադրվող տեղերի քանակը	Անվանում Նկարագիր	Տեղադրվող լույսերի կամ զարդարանքների քանակը
1	Արշակունյաց պ.	2	45 տեղ	Լուսաշղթա - (12մ ոչ պակաս, լամպերի հեռ. 40սմ, կախվածությունը 10 և 15սմ՝ մեկումեջ, լամպերի /LED/ հզորությունը՝ 7W-4000K, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում):	45
				Գունդ – (Տրամագիծ 60սմ ոչ պակաս, արտաքինից փաթաթվող 20մ ոչ պակաս շղթա լույս, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում):	90
2	Բագրատունյաց փ.	2	28 տեղ	Լուսաշղթա - (12մ ոչ պակաս, լամպերի հեռ. 40սմ, կախվածությունը 10 և 15սմ՝ մեկումեջ, լամպերի /LED/ հզորությունը՝ 7W-4000K, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում):	28
				Տնակ – (մակերեսը՝ 25սմ-35սմ ոչ պակաս, փայտե լաքապատ, ներսում /LED/ լամպ, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում):	56
3	Գ. Նժդեհ փ.	2	25 տեղ	Լուսաշղթա - (10մ ոչ պակաս, լամպերի հեռ. 40սմ, կախվածությունը 10 և 15սմ՝ մեկումեջ, լամպերի /LED/ հզորությունը՝ 7W-4000K, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում):	25
				Անձրևանոց – (տրամաչափը 80սմ ոչ պակաս, մետաղական ցանցով, փաթաթված 25մ ոչ պակաս շղթա լույսով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	50
4	Արտաշիսյան փ.	2	28 տեղ	Լուսաշղթա - (10մ ոչ պակաս, լամպերի հեռ. 40սմ, կախվածությունը 10 և 15սմ՝ մեկումեջ, լամպերի /LED/ հզորությունը՝ 7W-4000K, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում):	28
5	Չեխով փ.	1	48 տեղ	Զանգ, Ձնեմարդ, նապաստակ փաթիլ, խաղալիք – (Տրամաչափ 80սմ ոչ պակաս, մետաղական ցանցով, փաթաթված 25մ ոչ պակաս շղթա լույսով և կախված 1.5մ մետաղական ձողով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	48
6	Մանթաշյան փ.	2	21 տեղ	Աստղ-նախշ - (մակերեսը՝ 1մ-2.5մ ոչ պակաս, ընդգծված 9մ տափակ LED լույսով, ներսը ՝ 15մ ոչ պակաս շղթա լույսով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	21

7	Ե. Թադևոսյան փ. Ս. Տարոնց փ.	1	11 տեղ	կոնստրուկցիայով, ընդգծված 4մ LED լույսով, ներսը՝ 20մ ոչ պակաս շղթա լույսով, և կախված 1.5մ մետաղական ձողով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում) Հրեշտակ - (մակերեսը՝ 1.90մ-1.40մ ոչ պակաս, մետաղական կոնստրուկցիայով, ընդգծված 16մ LED լույսով, ներսը՝ 40մ ոչ պակաս շղթա լույսով, և կախված 1.5մ մետաղական ձողով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	11
8	Հովի.Հովհաննիսյան փ. (Զարբախ փոս)	1	23 տեղ	Զանգ, Ձնեմարդ, նապաստակ փաթիլ, խաղալիք - (Տրամաչափ 80սմ ոչ պակաս, մետաղական ցանցով, փաթաթված 25մ ոչ պակաս շղթա լույսով, և կախված 1.5մ մետաղական ձողով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	23
9	Շիրակ փ.	2	9 տեղ	Լուսաշղթա - (10մ ոչ պակաս, լամպերի հեռ. 40սմ, կախվածությունը 10 և 15սմ՝ մեկումեջ, լամպերի /LED/ հզորությունը՝ 7W-4000K, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում):	9
			6 տեղ	Եղևնի – (մակերեսը՝ 1մ-1.70մ ոչ պակաս, մետաղական կոնստրուկցիայով, ընդգծված 4մ LED լույսով, ներսը՝ 20մ ոչ պակաս շղթա լույսով, և կախված 1.5մ մետաղական ձողով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում) Հրեշտակ - (մակերեսը՝ 1.90մ-1.40մ ոչ պակաս, մետաղական կոնստրուկցիայով, ընդգծված 16մ LED լույսով, ներսը՝ 40մ ոչ պակաս շղթա լույսով, և կախված 1.5մ մետաղական ձողով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	6
10	Աէարացիա	2	12 տեղ	Աստղ - նախշ – (մակերեսը՝ 1մ-2.5մ ոչ պակաս, ընդգծված 9մ տափակ LED լույսով, ներսը՝ 15մ ոչ պակաս շղթա լույսով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	12
11	Նորագավիթ	1	56 տեղ	Զանգ, Ձնեմարդ, նապաստակ փաթիլ, խաղալիք - (Տրամաչափ 80սմ ոչ պակաս, մետաղական ցանցով, փաթաթված 25մ ոչ պակաս շղթա լույսով, տեղադրում, և կախված 1.5մ մետաղական ձողով, սպասարկում, ապամոնտաժում)	56

12	Մայիսի 9 փ.	2	8 տեղ	կախվածությունը 10 և 15սմ՝ մեկումեջ, լամպերի /LED/ հզորությունը՝ 7W-4000K, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում):	8
			8 տեղ	Աստղ - (Տրամաչափ 80սմ ոչ պակաս, մետաղական ցանցով, փաթաթված 25մ ոչ պակաս շղթա լույսով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	8
13	Փոքր օդանավակայան	2	5 տեղ	Աստղ-նախշ – (մակերեսը՝ 1մ-2.5մ ոչ պակաս, ընդգծված 9մ տափակ LED լույսով, ներսը ՝ 15մ ոչ պակաս շղթա լույսով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	5
14	Ներքին Չարբախ	1	21 տեղ	Զանգ, Ձնեմարդ, նապաստակ փաթիլ, խաղալիք - (Տրամաչափ 80սմ ոչ պակաս, մետաղական ցանցով, փաթաթված 25մ ոչ պակաս շղթա լույսով, և կախված 1.5մ մետաղական ձողով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	21
15	Խարբերդ	1	22 տեղ	Բադ – (մակերեսը՝ 1.20-2մ ոչ պակաս, մետաղական կոնստրուկրիայով, ընդգծված 14մ LED լույսով, տեղադրում, սպասարկում, և կախված 1.5մ մետաղական ձողով, ապամոնտաժում)	22
16	Մանանդյան փ.	2	4 տեղ	Աստղ-նախշ – (մակերեսը՝ 1մ-2.5մ ոչ պակաս, ընդգծված 9մ տափակ LED լույսով, ներսը՝ 15մ ոչ պակաս շղթա լույսով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	4
17	Երևանյան լիճ	2	90 տեղ	Գունդ- (սյունից սյուն երկաթե մալուխից կախված գնդերը, տրամաչափ՝ 60սմ ոչ պակաս, փաթաթված 20մ շղթա լույսով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	90
18	Ներքին Շենգավիթ 11փ.	1	22 տեղ	Զանգ, Ձնեմարդ, նապաստակ փաթիլ, խաղալիք - (Տրամաչափ 80սմ ոչ պակաս, մետաղական ցանցով, փաթաթված 25մ ոչ պակաս շղթա լույսով, և կախված 1.5մ մետաղական ձողով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	22
19	Ս. Տարոնցի փ.	1	8 տեղ	Զանգ, Ձնեմարդ, նապաստակ փաթիլ, խաղալիք - (Տրամաչափ 80սմ ոչ պակաս, մետաղական ցանցով, փաթաթված 25մ ոչ պակաս շղթա լույսով, և կախված 1.5մ մետաղական ձողով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	8
20	Շարուրի փ.	2	6 տեղ	Աստղ-նախշ – (մակերեսը՝ 1մ-2.5մ ոչ պակաս, ընդգծված 9մ տափակ LED լույսով, ներսը ՝ 15մ ոչ պակաս շղթա լույսով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	6
21	Կարմիր Բլուրի օղակաձև ճանապարհ	1	12 տեղ	Ձնեմարդ անձրևանոցով – (1-2մ-ից ոչ պակաս, փաթաթված, 80մ շղթա լույսով, 10հատ կիսագունդ տրամաչափը 1մ ոչ պակաս 30մ շղթա լույսով փաթաթված, 2023 պատրաստված երկաթե կոնստրուկցիայով 2-5մ՝	12

				լույսով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	
22	Բանվորի արձանի օղակաձև ճանապարհ	1	22 տեղ	Ձնեմարդ անձրևանոցով – (1-2մ-ից ոչ պակաս, փաթաթված, 80մ շղթա լույսով, 20հատ կիսագունդ տրամաչափը 1մ ոչ պակաս 30մ շղթա լույսով փաթաթված, 2023 պատրաստված երկաթե կոնստրուկցիայով 2-5մ՝ ընդգծված 50մ տափակ LED լույսով, ներսը 200մ շղթա լույսով, տեղադրում, սպասարկում, ապամոնտաժում)	22
23	Գարեգին Նժդեհի հրապարակ	1	31 տեղ	Լուսաշղթա - 20 տեղ, 10մ ոչ պակաս, լամպերի հեռ. 40սմ, կախվածությունը 10 և 15սմ՝ մեկումեջ, լամպերի /LED/ հզորությունը՝ 7W-4000K, 1 տեղ-2023 պատրաստված երկաթե կոնստրուկցիայով 2.5-7մ, թվերի հաստությունը 25սմ, ընդգծված 130 մ տափակ LED լույսով, ներսը փաթաթված 500մ շղթա լույսով Գունդ – 8 հատ, տրամաչափը 1.5մ, ոչ պակաս 50մ շղթա լույսով փաթաթված Ժապավեն – 2 տեղ, պատրաստված երկաթե կոնստրուկցիայով 3-7մ, 3-րդ մասի հրապարակում գտնվող էլեկտրասյուներից կախված մետաղյա մալուխով, ընդգծված 100մ տափակ LED լույսով, ներսը փաթաթված 1000մ շղթա լույսով	31

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900022750542
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՀՐԱԿԱՂՅՈՒՍ ՇԻՆ» ՍՊԸ
Ք.Երևան, Ն. Շենգավիթ 11փ. 1 նրբ. տ. 52/3
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570084065950100
ՀՎՀՀ 02303834

Ն. Մովսիսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«07» նոյեմբերի 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/193
ծածկագրով գնման պայմանագ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79951110/256	Շենգավիթ վարչական շրջանի Ամանորյա տոնական ձևավորում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	9600000	9600000

Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900022750542
ՀՎՀՀ 02593108

Ի. Օսիպյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՀՐԱԿԱՂՅՈՒՍ ՇԻՆ» ՍՊԸ
Ք.Երևան, Ն. Շենգավիթ 11փ. 1 նրբ. տ. 52/3
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570084065950100
ՀՎՀՀ 02303834

Ն. Մովսիսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3

« » նոյեմբերի 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/193
ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

« » նոյեմբերի 2022թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-22/193
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն